


ՀԱՅԿԱԿՈՆ ԽԾՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴՅԱԿԱՆ ԿՈՄԻՏԱԳԻՈՏ
ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ

Ա. ԲԱԲԱՅԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԶԵՌԱՑԱԳԻՐ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀԵԾՀ ԼՈՒՍԱՎՈՐԿՈՄԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱԾ
ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱՔԻՆԵՑ

Dear Dr. G. L. Smith,
you can find him at
C. U. of N. Y., or he is

Ա. ԲԱԲԱՅԱՆ

Mr. Paul Hausey
12. vii. 42.
Zulu

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԶԵՂԱՑԱԳԻՐ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԳՐԱԴԱՐԱՆՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԲԸՆԿԵՐ

ԵՐԵՎԱՆ

1939

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Տասնյակ տարիներ և ինչ դոյություն ունի լատինական գրերի համար հատուկ գրադարանային ձեռացազիր և դործ և ածվում Ամերիկայի, Յելլուպայի, ինչոքս նաև Խորհրդային Միության գրադարաններում։ Վաղուց արդեն մշակվել և նույնազես ոռուերեն գրադարանային ձեռացազիրը և կիրառվում և Խորհրդային Միության գրադարանային պրակտիկայում։ Մեզ մոտ, Խորհրդային Հայաստանում, չնայած վոր գրադարանային գործը բավականին լայն ծավալ և ընդունել և քաղաքական կուլտուրական ճակատի կարևորագույն ողակներից մեկն և Հանդիսանում, այնուամենայնիվ մինչև հիմա դոյություն չունի Հայերեն գրադարանային հատուկ ձեռացազիր, վորն այնքան անհրաժեշտ և մեր գրադարանների կատալոգների արտաքին տեսքը լավացնելու ու նրանց ողտագործումը հեշտացնելու Համար։ Մեր գրադարաններում կարելի յե հանդիպել այնքան ձեռացազրերով գրիմած քարտերի, վորքան գրադարաններ գոյություն ունեն և վորքան մարդիկ աշխատել են այդ կատալոգների վրա։ Ինչ խոսք, վոր այս հանգամանքը խոշոր չափով անդքաղաքանում և գրադարանների կատալոգների արտաքին տեսքի, հետևապես և սպասարկման աշխատանքների վրա ընդհանրապես։ Գրադարանային ձեռացազրի այս ձեռնարկի նպատակն է վերացնել այս բացը մեր գրադարանային պրակտիկայից։

Պետք և ասել, վոր Հայկական գրադարանների Համար Հատուկ գրադարանային ձեռացազիր մշակելն այնքան ել դոյուրին ու Հեշտ դործ չեր։ Հայոնի յե, վոր Հայերեն գրերի տառատեսակները վարուշ չափով ազքամ են և բացի այդ մեր դըերը իրենց արտաքին տեսքով այնքան ել պարզ ձեւ չունեն։ Մեզ մում եր միայն ընտրություն կատարել յեղած տառատեսակների մեջ և ընտրել համեմատարար ավելի պարզ և գեղեցիկ տառատեսակը ու դրա հիման վրա յել մշակել գրադարանային ձեռացազիր։

Հայերեն դրադարանային ձեռացագիր մշակելու համար հիմք ընդունեցինք մեր գործածական բոլոր զբերից Արամյան կոչված գրերը, վորոնք ամենի պարզ են և ուղղահայաց դիրք ունեն, քանի մեր մյուս բոլոր գրերը: Բացի դրանից այդ գրերը իրենց արտաքին տեսքով բավականին մոտենում են լատինական պարզ ու գեղեցիկ գրերին: Գրադարանային ձեռացագիրը մշակելիս աղաւագործել ենք լատինական և ռուսական դրադարանային ձեռացագրերի սկզբունքները, նրանց փորձը և զբերու յեղանակը:

Գրադարանային ձեռացագրի մեր այս ձեռնարկը քննության
և առնվել ՀԽՍՀ Լուսժողկոմատի Գրադարանային վարչության
կողմից հապիված Յերևան քաղաքի դրադարանավարների խոր-
հրբերգությունում :

Լույս ընծայիլելով գրադարանային ձեռացագրի մեր ուրիշ ձեռնարկը չենք կարծում, վոր այն վերջանական է: Հայտնի էն, վոր ոռուսերեն գրադարանային ձեռացագրիրը, չնայած վոր, ինչպես ասեցինք, վաղուց ե մշակվել և կիրառվում ե գրադարաններում, շարունակ ճշտվում և կատարելագործվում և գրադարանային պրակտիկայում: Անդամ այդ ձեռնարկի վերջին՝ 1937 թ. հրատարակությունը լույս է տեսել նոր լրացումներով՝ ու ճշտումներով: Կարծում ենք, վոր հայկական գրադարանների համար մշակված գրադարանային մեր այս ձեռացագրիրը կիրառելով դրադարանային պրակտիկայում, հետազայտմ նույնակա ամելի և կծառափի և կլիերացվեն այն թերությունները, վոր կարող է ունենալ այն:

U. S.

1) *Шиномашины и тракторы* Григорьев, Ю. В. Библиотечный почерк. М. 1937 г. Экслибрисы:

ԻՆՉ Ե ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԶԵՌԱՑԱԳԻՐԸ

Գրադարանային կատալոգի (գրացուցակ) առաջ զբաժան
խնդիրներից մեկն այն է, վոր նա արտաքնապես լինի պարզ,
դեղեցիկ է, վոր գլխավորն է, դյուրընթեռնելիք։ Ապացուցված
է, վոր մի քանի տարրեր ձեռաշաղթերով գրված, վոչ պարզ,
դժվար ընթեռնելիք քարտերից կազմված կատալոգը վոչ միայն
չի գրավում ընթերցողին և շատ չուտ հոգնեցնում է նրան, այս
դժվարացնում է կատալոգից ողտվելն ընդհանրապես։ Այսինչ,
հայտնի յե, վոր կատալոգը ընթերցողի համար հանդիմանում է
այն գլխավոր միջոցներից մեկը, վորով կարողանում է նա իմա-
նալ թե ինչ դրէեր կան գրադարանում։ Ուստի գրադարնաը խո-
շոր ուշադրություն սկսոք եր դարձնի կատալոգների արտաքին
տեսքի վրա և առաջին հերթին լավացնի քարտերի արտաքին
տեսքը, վորոնցից կազմվում են գրադարանի կատալոգները։

Կատալոգի արտաքին տեսքը լավացնելու համար ամենահիմ-
նական միջոցը տպադրված քարտերի կիրառումն է կատալո-
գում, վորը չնորհիվ տպարանական տառերի սպարզության,
դյուրընթեռնելիության և միաձեռության, կատալոգին տայիս և
բավականին հաճելի տեսք։ Յերկրորդ միջոցը՝ մեքենադրված
քարտերի կիրառումն է, վորն ավելի պարզ եւ դյուրընթեռնելի,
քան ձեռքով գրված քարտերը։ Մեր գաղաքանները հնարավո-
րություն չունեն իրենց ամբողջ գրքային ֆոնդի համար ողտա-
դրծել տպադրված քարտեր։ Նախ, վոր ՀԽՍՀ Պետգրապալատը
սրացրասառում է տպագրված քարտեր միայն ընթացիկ գրականու-
թյան համար, այն եւ 1930 թվից սկսած և յերկրորդ՝ Գրադարանը
տպադրված քարտեր պատրաստում է գերազանցապես դիտական
գրադարանների համար՝ նրանց սպահանջներին համապատասխան։
Մասսայական գրադարաններն ամրողապես, ինչպես և դիտական
գրադարաններն իրենց գրականության մեծ մասը (1930 թ.- առաջ
յեղած գրականության համար) սկսոք և նկարագրեն ձեռադրով
կամ գրամեքենայի միջոցով։ Անգամ Ամերիկայի և Յելլուպայի
գրադարանային պրակտիկայում, վորտեղ շատ վաղուց եւ ինչ
կիրառվում են տպագրված կամ մեքենադրված քարտեր, այ-

Նուամենայնիվ, այլտեղ ևս, շատ հաճախ, դրբերի նկարագրությունը կատարվում է ձեռագրով:

ԱՀա այն դեպքում, յերբ գրադարանում զրքի քարտը պետք է զրել ձեռագրով, ապա այն զրվում և հատուկ, այսպես ասած գրադարանային ձեռագրով (бланкетный почерк):

Գրադարանային ձեռացագրի գյուղաբ կապված և հանրահռչակ Եղիսանի անվան հետ : Եղիսանը զբությունը հեռացացին զործի ասպարիզում կիրառելու համար յերկար փորձերից հետո յեկել և այն յեղրակացության, վոր առանձին տառերով զրված դրությունը տալիս և ամենաապարզ և արագ ձեռացագրեր : Եղիսանի այդ յեղրակացության հիման վրա ամերիկացի Հայոնի գրադարանագետ Մելիքի Դյուքին վերցնելով նրա գյուղի հիմնաժան այդ սկզբունքը դեռևս 19-րդ դարի 80-ական թվականներին մշակում և գրադարանների համար հատուկ գրադարանային ձեռացագրեր :

Գրադարանային ձեռացաղբի տառերը և թվերը գրվում են անջատակի, բաժան բաժան, ունեն ուղղահայց դիրք, զերծ են զարդարանքներից և ավելորդ զծիկներից։ Գրադարանային ձեռացաղբի տառերը իրենց արտաքին տեսքով բավականին մոտ են տպագիր տառերին, բայց սխալ կլինի իշարկե նույնացվեն գրադարանային ձեռացաղբի տառերը տպարանական տառերին։ Կան գրադարանային ձեռացաղբի մի շարք տառեր, վորոնց արտաքին տեսքը տարբերվում է տպարանական տառերից (տես նկ. 1)։

3K31	Արտավեց, Ի.
U 90	Լենինիկմի հարսւերը: Թարգ. ոռ սերեն 10-րդ հրատ 2-րդ հրատ. ՅԵՐ ԿՈ. սիրատ: 1937. 761 էջ 24սմ.

Գրադարանային ձեռացազրով հիմնական նշանակությունը նայն է, վոր միաձևություն և մտցնում տարրեր մարդկանց կողմից գրված ժարտերի մեջ, պարզ ու դյուրընթեռնելի յէ ընթերցողների համար, գրվում ե արագ, հեշտությամբ յուրացվում ե աշխատակիցների կողմից և այդպիսի ժարտերից կազմված կատալոգը արտաքինակես գեղեցիկ ե ու գրավիչ :

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՁԵՌԱՑԱԳՐՈՎ ԳՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գրադարանային ձեռացազրով զրելու համար գրադարանացարեց առանձին ընդունակություններ չե պահանջվում: Այդ ձեռացազրով զրել կարող ե յուրաքանչյուր զրադարանավար: Պետք ե միայն վոր գրադարանավարը ձեռք բերի պրակափկա, վարժիքի գրադարանային ձեռացազրով զրելու յեղանակներին: Գրադարանային ձեռացազրին վարժվելու համար նախորոշ փորձեր պետք ե կատարել հատուկ, այսպես առաջ միլիմետրացանց (միլիմետրովիկա) թղթի վրա: Անհրաժեշտ ե, վոր արդ թղթի վրա վարժությունները կատարվեն յուրաքանչյուր տառի նկատմամբ առանձին առանձին, յուրաքանչյուր տառը կամ թվանշանը գրվի բոլոր դեպքերում միևնույն յիշանակով և ձևով, խիստ կերպով պահպանվեն տառերի չափսերը, տառերի ու քառերի հեռավորությունն իրարից և այլն: Միլիմետրացանցի վրա վարժություններ կատարելուց հետո գրադարանավարը վարժություններ պետք ե կատարի ժարտերի վրա: Այդ վարժությունների ընթացքում, յերբ գրադարանավարը համոզվում է, վոր արդեն տիրապետել ե գրադարանային ձեռացազրով զրելու տեխնիկային անցնում և զրբերի նկարագրությանը այդ ձեռացազրով:

Գրադարանավարը կատարելով աշխատանքի կազմակերպման և գրադարանային ձեռացազրով զրելու համար պահանջվող ներքուհին կանոններն ու պայմանները հեշտությամբ կարող ե յուրացնել զրադարանավարը մեռացազրի տեխնիկան, այդ ձևուացազրի կիրառման հետեւանքով եւ իր գրադարանում կանոնադրավիչ, զյուրընթեռների կատարողներ:

1. Գրադարանային ձեռացազրով զրելու համար նախ և առաջ անհրաժեշտ է, վոր գրադարանավարը նստած լինի վորքան կարելի յե ուղղահայց դիրքով, առանց կարծքը հենելու սե-

դանին : Զեռքերը մինչև արմունկները ամբողջապես պետք ե լինեն գրասեղանի վրա, ընդ վորում ձախ ձեռքը պետք ե թեթև կերպով հողի կրծքին, իսկ աջ ձեռքը մոտավորապես զուզահեռ ուղղությամբ լինի աջ ուսին :

2. Միլիմետրացանցը, հետագայում և գրքի քարտը գրասեղանի վրա գրված պետք ե լինի գրողի ուղիղ աչքերի դիմաց, ուղղահայաց դիրքով, այնպես վոր քարտի ներքեւի հորիզոնական գիծը զուգահեռ լինի գրասեղանի յեղերքին :

3. Տառերը պետք ե գրել պարզ, առանց ավելորդ գծիկների և զարգարանքների : Զեր տեսակետից վոչ մի տարբերություն չողետք ե լինի միենույն տառերի գրության միջև :

4. Խստորեն պետք ե հետևել, վոր պահպանի տառերի ուղղահայաց դիրքը : Զի թուրատրվում նվազագույն չափով թեքում :

5. Պետք ե գրել այնպես, վոր բոլոր տառերի զծերը միենույն հաստության ունենան : Զպետք ե գրչածայրի հպումը ուժեղացնել և թուլացնել, վորի հետևանքով տառի զծերը վորու տեղերում ուժեղանում և թուլանում են :

Բավական չեն վերոհիշյալ կանոնների կիրառումը : Գրադարանային ձեռացազրի լավորակության համար խոչոր նշանակություն ունեն զրության գործիքները և աշխատանքի կազմակերպումն ընդհանրապես : Այս տեսակետից կարեար նշանակություն ունեն գործածվող թանաքը, գրչակոթը, գրչածայրը, անդամ թանաքամանը :

1. Պետք ե գործածել լավորակ թանաք : Պահանջվում է, վոր թանաքը ունենա այնպիսի վորակ, վոր գրելուց հետո արագորեն չօրանա և, վոր գլխավորն է, չորանալուց հետո թանաքը ստուն վառ գույնի յերկար ժամանակ՝ պահպանի իր գույնը : Այս տեսակետից ամենալավը համարվում է խիստ սև գույնի թանաքը : Բոլորովին չի հանձնարարվում գրոշմի համար յեղած թանաքը և նման այլ թանաքներ :

2. Թանաքամանը անպայմանորեն պետք ե ունենա ծածկոց՝ փուլուց և այլ կեղաներից պահպանելու համար և շարունակ լիւը լցված լինի թանաքով : Անհրաժեշտ է վոր թանաքամանը լինի գրողի աջ կողմը և վորքան կարելի յե մոտ դեպի իրեն :

3. Հանձնարարվում է գործածել այնպիսի գրչակոթներ, վորոնք յերեք կողմից հատվածքներ ունենան : Այս ձեր գրչակոթները հնարավորություն են տալիս գրողին գրչակոթը շարունակ բոնել ուղիղ դրությամբ, վորպիսի դեպքում նրա գրության

շարժումները լինում են ավելի ազատ և հոստատուն։ Գրչակոթք
պետք ե բանել զերազանցապես միջին և բոլոր մասներով, վե-
րեից, ապվող գրությամբ, զրչակոթին հովելով ցուցամատը։ Զի-
թույլատրվում ցուցամատը ուժեղ և այն ել կծկված գրությամբ
հարել զրչակոթին։

4. Լավորակ զրության համար խոչը նշանակություն ունի
նաև համապատասխան զրչածայրերի գործածումը։ Պետք
ե գործածել այսպիսի զրչածայրեր, վորոնք ունեն զնդիկաձև
վերջավարություն։ Այս ահապահանգի հանձնարարությունը և «Ասյուղ»
ֆաբրիկայի № 60, № 516 EF և № 510 EF զրչածայրերը։
Մասնավորապես հանձնարարվում և «Բնքնահոս զրիչ» գործա-
ծումը։ Գրադարանային ձեռացալբարվ զրելու համար բոլորուն
չի հանձնարարվում «ոսնդո» կոչված զրչածայրերը։ Անհոս-
տես և, վոր զրչածայրը պահպի շարսնակ մաքուր գրությամբ։
Գրելուց հետո զրչածայրը պետք ե մաքրել մահուգի կտորով։

5. Ծծողական բալորովին չի թույլատրվում գործածել։ Գրե-
լուց հետո զրչի քարտը պետք ե թողնել ինքն իրեն չորանա։

Գրության սոողջապահության համար անհրաժեշտ և, վոր
զրագարանավարը չգործածի շատ բարակ զրչակոթիներ։ Բնդհա-
կառակը որվա ընթացքում պետք է գործածել մի քանի տարեր
հաստություն ունեցող զրչակոթիներ։ Այս կերպ գրողի ձեռքի
մկանների զրության մեջ առաջնում է փոփոխություն, վարը
չուտ չի հողնեցնում նրան։ Այսուամենայնիօ, յերբ զրագարա-
նավարը նկատում է, վոր յերկար զրելու հետևանքով ձեռքը
հողնել և, պետք ե անմիջապես զարպեցնի զրությունը և մի
քանի բազեյով հանդուսանա։ Սա անհրաժեշտ և թե՛ իր առողջու-
թյան և թե՛ զրության վորակի համար։

ՏԱՐԵՐԻ ՅԵՎ ԹՎԱՆՇԱՆՆԵՐԻ ԶԱՓՍԵՐԸ


Տառերի և թվանշանների չափությունը վորոշելու համար նկատի
յի ունեցում կատարությին քարտի միջազգային չափուի առողերի
հեռավորությունն իրարից, վորը հավասար և ուղիղ վեցը միլի-
մետրի։ Բաժանելով այն յերեք հավասար մասի ստացվում է
յերկուական միլիմետր յուրաքանչյուր մասում։ Սրանից ել պետք
ե յելնել վորոշելու զրագարանային ձեռացազրի տառերի և թր-

վանշանների յերկարությունը։ Այդ հաշվով հայերեն փոքրա-
տառերի բարձրության համար նկատի պետք է ունենալ յերեք
դեսպեր։

ա) Այն տառերը, վորոնք զրվում են՝ յերկու տողի մեջ (ա,
ն, ս, ռ և այլն) բարձրության համար պետք է ընդունել յերկու^{միլիմետր}։

բ) Այն տառերը, վորոնք զրվում են՝ յերեք տողի մեջ (թ,
դ, դ, ե, գ, ժ, դ, դ և այլն) բարձրության համար պետք է ըն-
դունել յերեք և կես միլիմետր։

գ) Այն տառերը, վորոնք զրվում են չորս տողի մեջ (ի, կ,
լո, փ, Փ, Վ և այլն) տառի բարձրությունը պետք է լինի հինգ
^{միլիմետր}, ընդ վորում յերեք և կես միլիմետր տողից վերև,
մեկ և կես միլիմետր տողից ներքեւ։ Իսկ ծ, ձ, ա, տառերի բարձ-
րությունը պետք է հավասար լինի յերեք միլիմետրի, «է» տառի
բարձրության համար պետք է ընդունել չորս միլիմետր, վորից
յերեք և կես միլիմետր տողից վերև, կես միլիմետր տողից ներ-
քեւ։ Պետք է հետևել այս չափսերի կիրառմանը, հակառակ պա-
րագայում տողերի տառերը կարող են իրար հետ մխանալ։ Մինչ-
դեռ այս չափսերը պահպանելով տողերի միջև մնում է ուղիղ
մեկ միլիմետր ազատ տարածություն (տես նկ. 2)։



Նկ. 2. Տառերի չափսերը կատարողային բարակ 6 մմ. Հեռավորություն
ունեցող տողերի միջև (մեծացրած)


Փոքրատառերի լայնությունը հավասար պետք է լինի յեր-
կու միլիմետրի, բացի ա, գ, դ, զ, թ, լո, դ, մ, պ, ս, վ, ա, լո,
ս, փ, հ տառերից, վորոնց պետք է տալ յերեք միլիմետր լայ-

նություն։ Փոքրաստառերից 1, 3, և և ատակը հօրիզոնական գը ծերի յերկարությունը պետք է լինի մոտ մեկ միլիմետր։

Մեծատառերի բարձրությունը պետք է վերցնել յերեք և կես միլիմետր, բացի և, Զ, Զ, Զ, Զ, Ք, տառերից վորոնց յերկարությունը պետք է լինի չորս և կես միլիմետր, ընդ վորում կես միլիմետրը առղից ներքեւ։ Մեծատառերի լայնությունը պետք է հավասար լինի յերեք միլիմետրի, բացի Գ, Դ, Թ, Փ, Խ, Վ, Ա, Ե, Ը, Շ, Ա և Փ տառերից, վորոնց լայնությունը հավասար չորս միլիմետրի։

Թվերի բարձրությունը պետք է լինի յերեք միլիմետր, լայնությունը՝ յերկու միլիմետր։

Առանձին տառերի հեռավորությունը բառերի մեջ պետք է բնդունել մոտ մեկ միլիմետր, նախադասության մեջ բառերի հեռավորությունն իրարից՝ չորս միլիմետր, նախադասությունների



Նկ. 3. Տառերի և թվանշանների բարձրությունն և լայնությունը միլիմետրացմբ վրա (մեծացրած)

Հեռավորությունն իրարից նույնագես չորս միլիմետր ընդ վորում
հեռավորությունը պետք է վերցնել կետաղբության նշանից :
Գրադարանավարը իր պրակտիկ աշխատանքներում պետք է հետեւի պահանջման այս չափութին, հակառակ գեղաքում կիսա-
տրվի քարտի պարզությունը :

ՀԱՅԵՐԵՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՏԱՌԵՐԸ ԳՐԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ՆՎԱԳՆԵՐԸ

Գրադարանային ձեռացագրով զրելիս պետք է աշխատել
միանգամից զրել ամբողջ տառը, տանց ընդհատելու այն: Այդ
պահանջմանը և նրա համար, վոր ինչպես զրադարանային փոր-
ձը ցույց է տվել, յերբ տառը միանդամից և զրվում պահան-
գում և նրա միաձեռւթյունը և արագ և կատարվում: Ինչպես
Հիմա կուսնենք, Հայերեն տառերի մեծ մասը հնարավոր և
միանդամից զրել, սակայն կան տառեր, վոր պետք և զրել յեր-
կու և ամենի նվազներով (տես նկ. 4, 5, 6):

Փ Ա Ք Բ Ա Տ Ա Ծ Բ

ա— Գրվում է մեկ նվազով, միանդամից: Պետք է սկսել
զրել ձախից, առաջին ուղղահայց զծից, վերից ներքի տանց
ընդհատելու շարունակվում և տարի մյուս մասերը: 1 նվազ:
Բարձր՝ 2 մմ., լայն՝ 3 մմ.

բ— Ակսում է ներքերից վերեւ: Առաջին նվազով գրվում և
ուղղահայց զիծը, վորի վերերի մասում յորված և կիսաշրջան:
Յերկրորդ նվազով գրվում է Հորիզոնական զծիկը մեկ միլիմետր
յերկարությամբ: 2 նվազ: Բարձր՝ $3\frac{1}{2}$ մմ., վորից $1\frac{1}{2}$ մմ.
տողից ներքի, լայն՝ 2 մմ.

գ— Սկսում է Հորիզոնական զծից, աջից ձախ, բարձրանում
և վեր զծելով շրջան և ապա տարվում և ուղղահայց զիծը:
1 նվազ: Բարձր՝ $3\frac{1}{2}$ մմ., վորից $1\frac{1}{2}$ մմ., տողից ներքի, լայն՝
3 մմ.

դ— Սկսում է ձախ ուղղահայց զծից ներքերից վերեւ, ապա
կիսաշրջան կազմելով իջեցվում և յերկրորդ ուղղահայց զիծը:
Հետեւ նվազով առավում է Հորիզոնական զիծը մեկ միլիմետր
յերկարությամբ: 2 նվազ: Բարձր՝ $3\frac{1}{2}$ մմ., վորից $1\frac{1}{2}$ մմ., տո-
ղից ներքի, լայն՝ 3 մմ.

Ն— Ակավում և վերիից ներքեւ տօսանց ընդհատելու պետք և գրել տառի յերկրորդ մասը ներքելից վերի մոտ մեկ միլիմետր յերկարությամբ։ Հետևյալ նվազով զրվում է հորիզոնական դիմք 2 մմ. բարձրությունից։ 2 նվազ։ Բարձր. 3½ մմ., լայն 2 մմ.

Գ— Ակավում և տոաջին ուղղահայացից, վերիից, առանց ընդհատելու գրվում է մնացած մասը, ներքեռում զեղի աջ տառի փոքրիկ դժիկ մեկ միլիմետրի սահմանում։ 1 նվազ։ Բարձր. 3½ մմ., վորից 1½ մմ. տողից ներքեւ, լայն. 3 մմ.

Ե— Ակավում և վերեխից ներքել։ Յերկրորդ նվազով տրվում է հորիզոնական դիմք։ 2 նվազ։ Բարձր. 3½ մմ., լայն. 2 մմ. տողից վերի, ½ մմ. տողից ներքեւ, լայն. 2 մմ.

Ը— Ակավում և ներքեխից, հորիզոնական դիմք, աջից զեղի ձախ, ապա տօսանց ընդհատելու զրությունը բարձրացնելու վերեխից դժիկ մասի տառի մնացած մասը։ 1 նվազ։ Բարձր. 3½ մմ., վորից 1½ մմ. տողից ներքեւ, լայն. 2 մմ.

Թ— Ակավում և ձախ ուղղահայաց դժիկ ներքեխից վերի, առանց ընդհատելու շարունակվում է տառի մնացած մասը։ 1 նվազ։ Վարձր. 3½ մմ., վորից 1½ մմ. տողից ներքեւ, լայն. 3 մմ.

Ժ— Ակավում և վերիից, ուղղահայացից, այնուհետև դիմք տարվում և զեղի ձախ, կիսաշրջան դժելով հորիզոնական դժույն միացվում է ուղղահայաց դժիկ։ Հորիզոնական դիմք մոտ 1 միլիմետրի չափ պետք է անցնի ուղղահայաց դժի այն կողմը։ 1 նվազ։ Բարձր. 3½ մմ., լայն. 3 մմ.

Ի— Ակավում և ձախ ուղղահայաց դժիկ, վերիից ներքեւ, այնուհետև նույն ուղղահայացով զրիչը մոտ 3½ միլիմետր բարձրանում է և զրվում է տառի մնացած մասը։ 1 նվազ։ Բարձր 5 մմ., վորից 3½ մմ. տողից վերի, 1½ մմ. տողից ներքեւ, լայն. 2 մմ.

Լ— Ակավում և վերիից ներքեւ, ապա ներքեռում մեկ միլիմետր զեղի աջ։ 1 նվազ։ Բարձր. 3½ մմ., վորից 1½ մմ. տողից ներքեւ, լայն. 2 մմ.

Խ— Ակավում և վերիից ներքեւ, ապա նույն ուղղահայացով բարձրանում և զրիչը և մոտ 3½ միլիմետր բարձրության վրա զրվում է տառի մնացած մասը։ 1 նվազ։ Բարձր. 5 մմ., վորից 3½ մմ. տողից վերի, 1½ մմ. տողից ներքեւ, լայն. 3 մմ.

ծ — Ակավում և վերեից, զրիչը թեքվելով դեպի աջ իջնում է ներքեւ, կիսաշրջան տալով բարձրանում է վեր և մոտ 2 միլիմետր բարձրության վրա հորիզոնական գծով՝ միացնում է կոր զծին։ Հորիզոնական զիծը մոտ մեկ միլիմետրի չափ պետք է անցնի կոր զծի այն կողմը։ 1 նվազ։ Բարձր. 3 մմ., լայն 2 մմ.

կ — Ակավում և վերեից, առաջին ուղղահայացից։ Տողի մոտ թեքվում է դեպի աջ կիսաշրջան կազմելով զրիչը բարձրանում է վեր 2 միլիմետր և ապա նույն զծի վրայով իջնում է ներքեւ տողից 1½ միլիմետր ցած։ 1 նվազ։ Բարձր. 5 մմ., վորից 3½ մմ. տողից վերև, լայն 2 մմ.

ի — Ակավում և վերեից ներքեւ ապա զրիչը նույն ուղղահայացով բարձրանում է մոտ 2 միլիմետր, կիսաշրջան կազմելով իջնում է դեպի տողը։ 1 նվազ։ Բարձր. 3½ մմ., լայն. 2 մմ.

ճ — Ակավում և վերեից թեք զծից, վորը ունենամություն 1 միլիմետր յերկարության, ապա զիծը շարունակվում է դեպի ձախ և զրիչում և «6» թվանշանի ձևով, այսուհետեւ առանց ընդհատելու զրությունը զրիչը թեք զծով իջնում է դեպի տողը։ 1 նվազ։ Բարձր. 3 մմ., լայն. 2 մմ.

դ — Ակավում և վերեից 2 միլիմետր բարձրությունից, վորից ձևառ զրիչը նույն զծով բարձրանում է և թեքվում դեպի աջ կիսաշրջան կազմելով իջեցվում է ուղղահայաց զիծը, ապա 1 միլիմետր յերկարությամբ այդ զիծը թեքվում է դեպի աջ։ 1 նվազ։ Բարձր. 3½ մմ., վորից 1½ մմ. տողից ներքեւ, լայն. 3 մմ.

ե — Ակավում և վերեից անհան կարողություն տալով իջեցվում է զիծը մինչև տողը։ Այսուհետեւ առանց ընդհատելու զրությունը շարունակվում է դեպի աջ, տողի վրա հորիզոնական զծելով բարձրացվում է և միացվում թեք զծին։ 1 նվազ։ Բարձր. 3½ մմ., լայն 2 մմ.

մ — Ակավում զրիչում և առաջին ուղղահայաց զիծը վերքից ներքեւ, առանց ընդհատելու զրությունը շարունակվում է յերկրորդ ուղղահայաց զիծը ներքեից վերև և ապա վերեւում տրվում է մեկ միլիմետր յերկարությամբ հորիզոնական զիծ դեպի աջ։ 1 նվազ։ Բարձր. 3½ մմ., լայն. 3 մմ.

յ — Ակավում և վերեից ներքեւ ապա հորիզոնական զիծ մոտ 1 միլիմետր յերկարությամբ դեպի ձախ։ 1 նվազ։ Բարձր. 3½ մմ., վորից 1½ մմ. տողից ներքեւ, լայն. 2 մմ.

ն— Սկսվում է վերեից, աջից ձախ: Սկզբում դրվում են մոտ մեկ միլիմետր յերկարությամբ կոր դիմ, ապա իջեցվում են ուղղահայաց մինչև տողը, վորից հետո առանց լողահատերու շարունակվում են գրությունը «ա» տառի ձևով: 1 նվազ: Բարձր.՝ 3½ մմ., լայն 2 մմ.

2— Գրվում են յերկու տողի մեջ: Սկզբում դրվում են կոր դիմ, ձախից աջ 2 միլիմետր յերկարությամբ, ապա դրիչը յատ են դառնում և կազմում են ավելի խոր կիսաշրջան՝ բացվածքը դեպի վեր: 1 նվազ: Բարձր.՝ 2 մմ., լայն.՝ 2 մմ.

3— Սկզբում դրվում են առաջին ուղղահայացը վերեից ներքեւ, այնուհետև պահպանում են նույն ուղղահայացով և չհասած յերկրորդ միլիմետրին թեքվում են դեպի աջ սուր անկյուն կազմելով դուռմ և յերկրորդ ուղղահայացը վերեից ներքեւ: 1 նվազ: Բարձր.՝ 2 մմ., լայն.՝ 2 մմ.

4— Սկսվում է վերեից՝ գծելով բութ անկյուն տողի վրա, այնուհետև սուր առանց լողահատերու գրությունը շարունակվում է տողից յած 1½ միլիմետր և ապա նույնպիսի բութ անկյուն (ավելի մեծ), կազմելով վերջանում են տառի գրությունը: 1 նրանք: Բարձր.՝ 3½ մմ., վորից 1½ մմ. տողից ներքեւ, լայն.՝ 2 մմ.

5— Սկզբում դրվում են «ա» տառի ձևով այն տարրերությամբ, վոր յերրորդ ուղղահայացը շարունակվում է տողից յած: 1 նվազ: Բարձր.՝ 3½ մմ., վորից 1½ մմ. տողից ներքեւ, լայն.՝ 3 մմ.

6— Սկսվում է վերեից: Սկզբում դրվում է լատինական «Տ» տառը ներքեւ մասը աննշան կորություն տալով, ապա վերեից նրան միացվում են յերկրորդ «Տ»-ը, վորը շարունակվում է տողից ներքեւ բութ անկյուն կազմելով դեպի աջ: 2 նվազ: Բարձր.՝ 3½ մմ., վորից 1½ մմ. տողից ներքեւ, լայն.՝ 2 մմ.

7— Գրվում են «օ» տառի նման: Յերկրորդ ուղղահայացը շարունակվում է տողի վրա դեպի աջ մոտ 1 միլիմետր յերկարությամբ: 1 նվազ: Բարձր.՝ 2 մմ. լայն.՝ 3 մմ.

8— Գրվում են «ա» տառի ձևով առանց յերրորդ ուղղահայացի: 1 նվազ: Բարձր.՝ 2 մմ., լայն.՝ 2 մմ.

9— Գրվում է սկզբում «օ» տառի ձևով, ապա յերկրորդ ուղղահայացը բարձրանում է վեր և նույն ուղղահայացով իջնում է տեղից 1½ միլիմետր յած, վորից հետո տարգման գիծը դեպի աջ՝ մոտ 1 միլիմետր յերկարու-

Ա ա Ֆ ֆ Շ շ

Չ չ Ե ե Զ զ Ւ ւ

Ը ը Ր ր Ճ ճ Ւ ւ

Լ լ Ւ ւ Ծ ծ Կ կ

Հ հ Ւ ւ Զ զ Ճ ճ

Եղիքին պատրիարքի տառերը դրեւու յեղանակներն ու նվազները
(Ա—Զ)

Դ Ճ Մ Մ

Յ յ Ա Յ

Թ Զ Ղ Թ

Ֆ Ֆ Ֆ Ւ

Ն Ո Ա Վ

Նկ. 5. Հայերեն այբուբենի տառերը գընիկ պատճեններն ու նվազները
Հայութեալ հայութեալ

S, ս, ՛, ն

Ց, յ, ւ, և

Ւ, Փ, ՞, Տ, Շ, Շ

Նկ. 6. Հայերեն այբուբենի տառերը զբելու յեղանակներն ու նվազները
(Տ—Ֆ)

Քյամբ: 1 նվագ: Բարձր. 5 մմ., վորից $3\frac{1}{2}$ մմ. տողից վերև,
1 $\frac{1}{2}$ մմ. տողից ներքև, լայն. 3 մմ.

Մ— Գրվում ե սկզբում «Ա», ապա «Ո» տառի ձեռվէ:
1 նվագ: Բարձր. 2 մմ., լայն. 3 մմ.

Բ— Սկսվում ե վերևից ներքև: Սկզբում դրվում ե առաջին ուղղահայացը, ապա դրիչը նույն ուղղահայացով բարձրանում ե և գրվում ե յերկրորդ ուղղահայացը: 1 նվագ: Բարձր.
 $3\frac{1}{2}$ մմ., վորից $1\frac{1}{2}$ մմ. տողից ներքև, լայն. 2 մմ.

Ծ— Սկզբում դրվում ե «Ա» տառի ձեռվէ, ապա յերկրորդ ուղղահայացը շարունակվում ե տողից ցած, վորից հետո գեղի ձափի թեքմելով արվում ե հորիզոնական դիմ 1 միլիմետր յերկարությամբ: 1 նվագ: Բարձր. $3\frac{1}{2}$ մմ., վորից $1\frac{1}{2}$ մմ. տողից ներքև, լայն. 2 մմ.


Ւ— Սկսվում ե վերևից ներքեմ, ապա գեղի աջ հորիզոնական դիմ՝ մեկ միլիմետր յերկարությամբ: 1 նվագ:
Բարձր. 2 մմ., լայն. 2 մմ.

Փ — Գրվում է «վ» տառի ձեռվ առանց ներքեկի Հորիզոնականի, ապա առանց ընդհատելու գրությունը զրիչը բարձրանում և նույն ուղղահայացով վեր և զրվում է տառի մնացած մասը։ 1 նվազ։ Բարձր. 5 մմ., վորից $3\frac{1}{2}$ մմ. տողից վերև, $1\frac{1}{2}$ մմ. տողից ներքեւ, լայն. 3 մմ.։

Ֆ — Սկսվում է վերեկից, աջ կողմից։ Սկսելով չպետք է կետ դնել։ Հորիզոնական գծի բարձրությունը տողից 2 միլիմետր։ 2 նվազ։ Բարձր. $3\frac{1}{2}$ մմ., լայն. 2 մմ.։

Լ — Սկսվում է վերեկից ներքեւ։ 1 նվազ։ Բարձր. $3\frac{1}{2}$ մմ., լայն. 3 մմ.։

Օ — Սկսվում է ձախից աջ։ 1 նվազ։ Բարձր. 2 մմ., լայն. 2 մմ.։



Դե. 7. Թվանշանների և հայերեն այլուրենից հանդած տառերի դրեւու
յականակները ու նվազները

Փ — Սկսվում է ներքեկի վերև, առաջ դրիչը թեքվում է դեպքի ձախի փոքրիկ կիսաշրջան տալով զրվում է տառի մնացած մասը։ 1 նվազ։ Բարձր. 5 մմ., վորից $3\frac{1}{2}$ մմ. տողից վերև, $1\frac{1}{2}$ մմ. տողից ներքեւ, լայն. 3 մմ.։

Բոլոր մեծատառերը դրվում են տողից վերև, բացի Զ., է., Զ., Զ. և Ք. տառերից, վորոնց բարձրությունը հավասար պետք է լինի, ինչպես ասացինք և միլիմետրի, ընդվորում կես միլիմետրը տողից ներքեւ, իսկ լայնությունը հավասար պետք է լինի 3 միլիմետրի, բացի Գ., Դ., Փ., Խ., Զ., Մ., Ռ., Վ., Փ. տառերից, վորոնց լայնությունը հավասար է 4 միլիմետրի:

Մեծատառերի զրելու ձեռ, բացի Ա., Զ., Հ., Զ., Մ., Յ., Զ., Զ., Զ., Յ., Ռ., Ս., Բ., Ց. և Ք. տառերից նույն և ինչ փոքրատառերինը:

Ա— Սկզբում դրվում է ինչպես «Ա» մեծատառը, վորից հետո աջ անկյան ներքեւի մասում ավելացվում է թեք գիծ: 2 նվազ: Բարձր. 3½ մմ., լայն. 3 մմ.

Զ— Գրվում է սկզբում «Հ» թվանշանի ձեռվ, ասկայն առանց ներքեւի մասի: Յերկրորդ նվազով ավելացվուած է ձախից աջ տառի ներքեւի մասը: 2 նվազ: Բարձր. 4 մմ., վորից ½ մմ. տողից ներքեւ, լայն. 3 մմ.

Ն— Սկզբում է վերից, թեք գծից: Սկզբում դրվում է վնասի թեք գիծը 1 միլիմետր յերկարությամբ, ապա առանց ընդհատությունակիցում և տառի ներքեւի մասը, ընդվորում ներքեւի թեք գծի յերկարությունը հավասար պետք է լինի 3 միլիմետրի: 1 նվազ: Բարձր. 3½ մմ., լայն. 3 մմ.

Զ— Գրվում է «Հ» թվանշանի ձեռվ: 1 նվազ: Բարձր. 4 մմ., վորից ½ մմ. տողից ներքեւ, լայն. 3 մմ.

Մ— Սկզբում դրվում է «Ա» մեծատառի ձեռվ, ապա առանց ընդհատելու տարիվում է վերեկի հորիզոնական գիծը 1 միլիմետր յերկարությամբ գեղիքի աջ: 1 նվազ: Բարձր. 3½ մմ., լայն. 4. մմ

Յ— Գրվում է «Յ» թվանշանի ձեռվ այն տարբերությամբ, վոր ներքեւի կիսաշրջանը մի փոքր ավելի մեծ պետք է լինի քան վերեբինը: 1 նվազ: Բարձր. 3½ մմ., լայն. 3 մմ.

Զ— Սկզբում դրվում է վերիկի շրջանը, վորն սկսվում է ներքեւից վերև, ապա վերեկում շրջան՝ կազմելուց շարունակվում է թեք գեղիքի ձախ մինչև տողը: Յերկրորդ նվազով հատվում է այդ գծի մերչավորությունը թեք գծավ ձախից աջ: 2 նվազ: Բարձր. 4 մմ. վորից ½ մմ. տողից ներքեւ, լայն. 3 մմ.

Պ— Սկզբում դրվում է փոքրատառ «Պ» տառի ձեռվ առանց հորիզոնական գծի, վորից հետո տրվում է շրջանի միջև յեղած

ուղղահայացը վերեկց ներքեւ։ Այդ ուղղահայացը մի փոքր յերակար պետք եւ լինի քան առաջին ուղղահայացը։ 2 նվազ։ Բարձր- $3\frac{1}{2}$ մմ., լայն։ 3 մմ.

9 — Գրվում եւ յերեք նվազով։ Սկզբում գրվում եւ տառի վերեկ մասը փոքրատառ «չ» տառի դիմի ձեռվ, այսինքն լատինական յերկու իրար հետ միացած «Տ» տառ, սակայն ավելի թեք եւ ավելի բացված։ Հետեւալ նվազով գրվում եւ տառի ներքեւի մասը ձախից աջ։ 3 նվազ։ Բարձր։ 4 մմ., վորից $\frac{1}{2}$ մմ. տողից ներքեւ, լայն։ 3 մմ.

10 — Սկզբում եւ ձախ ուղղահայացից ներքեկց վերեւ, ապա կիսաշրջան տալով կիսաշրջան տալով տարվում եւ յերկրորդ ուղղահայացը դեպի տողը։ Յերկրորդ նվազով տրվում եւ հորիզոնական դիմը մոտ 2 միլիմետր բարձրությունից։ 2 նվազ։ Բարձր։ 3 $\frac{1}{2}$ մմ., լայն։ 4 մմ.

11 — Սկզբում եւ ձախ ուղղահայացից վերեկց ներքեւ, ապա տողի վրա կիսաշրջան տալով տարվում եւ յերկրորդ ուղղահայացը ներքեկց վերեւ։ 1 նվազ։ Բարձր։ 3 $\frac{1}{2}$ մմ., լայն։ 3 մմ.

12 — Սկզբում եւ վերեկց, աջից գեսպի ձախ։ Տասի վերեկի կիսաշրջանը մի քիչ փոքր պետք եւ լինի ներքեւի կիսաշրջանից։ 1 նվազ։ Բարձր։ 3 $\frac{1}{2}$ մմ., լայն։ 3 մմ.

13 — Սկզբում եւ ձախ ուղղահայացից ներքեկց վերեւ, ապա առանց ընդհատելու գրությունը կիսաշրջան տալով գրվում և տառի մնացած մասը։ 1 նվազ։ Բարձր։ 3 $\frac{1}{2}$ մմ., լայն։ 3 մմ.

14 — Սկզբում եւ բացվածքի վերեկի դժիգ, դեպի աջ կիսաշրջան կարմելով տարվում եւ գեսպի վեր և ապա գրիչը թեքվելով գեսպի ձախ, գրվում եւ տառի մնացած մասը։ Վերեկի չըշանը փոքր պետք եւ լինի ներքեւի չըշանից։ 1 նվազ։ Բարձր։ 3 $\frac{1}{2}$ մմ., լայն։ 3 մմ.

15 — Սկզբում եւ ներքեւից վերեւ առանց ընդհատվելու գրությունը գրվում եւ վերեկի չըշանը։ Յերկրորդ նվազով տրվում հորիզոնական դիմը տողի վրա։ 2 նվազ։ Բարձր։ 4 մմ., վորից $\frac{1}{2}$ մմ. տողից ներքեւ, լայն։ 3 մմ.

16 — Համաձայն դիտական դրադարանների կատալոգիզացիայի կանոնների զբքերի նկարագրությունը պետք եւ կատարել այն ուղղագրությամբ, ինչ ուղղագրությամբ տպագրված եւ զբքի տիտղոսաթերթը։ Նկատի ունենալով այս հանգամանքը այսուուրենից հանված «է» և «Օ» տառերի զբկու ձեւը նույնպիս տրված

և ձեռնարկում, վորն անհրաժեշտ և դիտական դրադարաններում Հին ուղղագրությամբ դրքերի նկարագրության համար :

ԹՎԱՆՇԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ ՆՇԱՆՆԵՐԻ ԳՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Արարական բոլոր թվանշանները պետք են դրել մեկ նվազով, առանց զրիչը հեռացնելու քարտից : Բոլոր թվանշանների բարձրությունը հավասար պետք է լինի 3 մմ., լայնությունը 2 մմ. .

1 — Պետք են սկսել զրել վերեկից :

2 — Պետք են սկսել զրել վերեկից :

3 — Պետք են սկսել զրել վերեկից : Թվանշանի վերեկի մասը մի քիչ փոքր պետք է լինի ներքեկի մասից :

4 — Պետք են սկսել աջից : Նախ պետք են տանել հորիզոնական դիմում, ապա թեքել այն զեղի վեր և հետո իջեցնել ուղղահայց :

5 — Պետք են սկսել աջից : Նախ պետք են տանել վերեկի հորիզոնական դիմում հետո մի փոքր իջեցվում է թվանշանի բունը : Զարեւք և զծիկով հատել թվանշանի բունը :

6 — Պետք են զրել վերեկից :

7 — Պետք են զրել վերեկից, ձախից : Սկսելով հորիզոնական դիմում մի փոքր թեք իջեցվում է թվանշանի բունը : Զարեւք և զծիկով հատել թվանշանի բունը :

8 — Պետք են զրել մեջտեղից, ընդ սուրուամ վերեկի ձվածեր պետք են զրել ժամացույցի ալաքի շարժման ուղղությամբ, իսկ ներքեկի ձվածեր ոլաքի շարժման հակառակ ուղղությամբ : Թվանշանի վերեկի մասը մի քիչ փոքր պետք է լինի ներքեկի մասից :

9 — Պետք են զրել ներքեկից :

0 — Գրիում են այնպես, ինչպես «0» տառը, միայն 3 մմ. բարձրությամբ :

№ (համար) — Գրիում է մեկ նվազով յատինական, № մեծաւատակի ձեռվ : Պետք են սկսել ձախից, ներքեկից բարձրացնել վերեկ ուղղահայց դիմ, ապա թեք իջեցնել ներքեկ մինչեւ տողը և հետո նորից բարձրացնել վերեկ ուղղահայց : Փոքրիկ վերըն ընդհանուրագես չպետք են զրել նույնական հատել յերկու զծիկներով : Բարձ. 3 մմ. լայն, 3 մմ.

§ (պարտգրաֆ) — Պետք և դրել վերեկից, աջից վորովես միաց-
ված լատինական, յերկու «S» տառ։ Առաջին նվազով դրվում և
վերեկի «S»-ը, յերկրորդ նվազով դրվում և ներքեւի «S»-ը։ 2
Նվազ։ Բարձր։ 3 մմ։

ԳՐԱԴԱՐԱՆԱՑԻՆ ԶԵՌԱՑԱԳՐԻ ՏԱՌԱԳՐԵՐԸ

Ա Բ Գ Դ Ե Կ Ը Ը Ծ Ւ Լ Խ Ծ Կ Ի Ճ Ղ Ճ
Ս Յ Յ Ծ Ո Ծ Ս Կ Մ Ծ Ր Կ Վ Ւ Փ Փ
Հանդած բառեր

Է Օ

Ա Բ Գ Դ Ե Կ Ը Ը Ծ Ւ Լ Խ Ծ Կ Հ Զ Զ
Ղ Ճ Մ Յ Յ Ծ Ո Ծ Ս Կ Մ Ծ Ր Կ Վ Ւ Փ Փ
Ի Կ Բ Ֆ Ֆ
Հանդած բառեր

Է Օ

թվանշաններ

1 2 3 4 5 6 7 8 9 0

Բ Ա Վ Ա Գ Ա Խ Ա Խ Թ Յ Ա Խ Ե

1. Առաջարան	3
2. Ի՞նչ և գրադարանային ձեռացագիրը	5
3. Գրադարանային ձեռացագրերով գրելու կանոններն ու պայմանները	7
4. Տառերի և թվանշանների չափսերը	9
5. Հայերեն այրութենի տառերը գրելու յեղանակներն ու նվազագույնը	12
Փոքրաստաներ	12
Մեծաստաներ	20
6. Թվանշանների և այլ նշանների գրելու կանոնները	22



ԳԼՈՒԽԻՄ 8013 պատմեր 262, տիրաժ 1500

Հանձնված և արտադրության 8 մարտի 1939 թ. ստորագրված և ստղելու

«Հայկական ԽՍՀ ժողովական հրատարակչության
«Խորհրդային Հայաստան»-ի տպարան, Ցերեան

ԳԱԱ Եիմնարար Գիտ. Գրադ.



FL0387185

254
768

ԳԻՒԸ 1 Ա. 20-4.

(104.)

Ա. ՎԱԲԱՅՆ

БИБЛИОТЕЧНЫЙ ПОЧЕРК

Երևան, Наркомпрос Арм. ССР. 1939.